

Քննություն

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Դպրոցում քննություն են անցկացրել, որը գնահատվել է 10 բալանոց համակարգով:
Դպրոցականների աշխատանքները գնահատվել են, և տեսուչին ներկայացվել են
գնահատականները տոկոսներով, այսինքն, թե քանի տոկոսն է 10 ստացել, քանիսը 9-ը և այդպես
շարունակ: Հարմանալիորեն բոլոր տոկոսներն ամբողջ թվեր են:

«Ապասեք,- ասաց տեսուչը, նայելով թվերին,- բայց քանի՞ հոգի են մասնակցել քննությանը»:

Այդ հարցի պատասխանն, իհարկե, միարժեք չէ: Պահանջվում է գրել ծրագիր, որը պարզում է, թե
առնվազն քանի դպրոցական է մասնակցել քննությանը, որ արդյունքում այդպիսի տոկոսներ են
ստացվել:

Մուտքային տվյալներ

Տրված են իրարից մեկական բացատանիշով անջատված 11 ոչ բացասական ամբողջ թվեր, որոնց
գումարը 100 է: Առաջին թիվը ցույց է տալիս, թե քանի տոկոսն է ստացել 10, երկրորդը՝ 9, վերջին թիվը
ցույց է տալիս, թե քանի տոկոսն է ստացել 0:

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ քննությանը մասնակցած դպրոցականների մինիմալ քանակը:

Օրինակներ

Մուտք	Ելք
10 15 20 20 30 5 0 0 0 0 0	20
Մուտք	Ելք
10 10 10 10 10 10 10 10 10 10 0	10